ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Հայրապետ Հայրապետյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ճապոնիա, քաղաք Սապպորո, 2025թ. նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 12-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2025թ. նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 12-ը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից կազմակերպված «Վերականգնվող էներգիա - Ա» խորագրով դասընթացին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Իմ կողմից զեկույցի տեսքով ներկայացվել է ՀՀ էներգետիկայի բնագավառի, մասնավորապես՝ վերականգնվող էներգետիկայի ընթացիկ վիճակը և զարգացման միտումները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Դասընթացի ընթացքում դասախոսություններ են կարդացել տեղի և հրավիրված դասախոսները: Ներկայացվել է էներգետիկայի բնագավառում ճապոնական օրենսդրությունը, վերոնշյալ մասնագիտական հարցերին առնչվող այլ թեմաներ:
   Կազմակերպվել է այցելություն Օբիխիրո քաղաքի «Sicaoy» գյուղատնտեսական նշանակության տարածքը, որտեղ ցուցադրվել են վերականգնվող էներգետիկայի ճապոնական առաջավոր փորձը, մասնավորապես՝ կենսագազային և կենսազանգվածային աղբյուրներից էլեկտրաէներգիայի ստացումը և կիրառությունը:
   Կազմակերպվել են նաև այցեր այլ ընկերություններ, մասնավորապես՝ Սիձեն Դենրյոկու, Նոզոմի Էներջի, Մարույամա և այլն:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Դասընթացի ավարտին կազմակերպիչների կողմից շեշտվել է կարևորությունը ապահովելու սույն ծրագրի շարունակականությունը: Մասնակիցներից պահանջվել է դասընթացի ընթացքում ստացած գիտելիքների հիման վրա պատրաստել «Գործողությունների Պլան»:
   Վերապատրաստման դասընթացի ավարտին տրվել է վկայական:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Իմ կողմից պատրաստված «Գործողությունների Պլան»-ում առաջարկվել է ներդնել ուղղահայաց արևային պանելների փորձարարական ծրագիրը Հայաստանում:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
էներգետիկ տարածաշրջանային
շուկաների զարգացման բաժնի
գլխավոր մասնագետ Հայրապետ Հայրապետյան

15.12.2025թ.